ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1957 Общественные науки

Խ. Փորքշեյան

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Նոր-Նախիջևանի հայկական գաղութը գրեթե չի ուսումնասիրված։ Այդ գաղութի մասին հետաքրքիր տեղեկություններ կան Ա. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատության մեջ։ Անհրաժեշտ ենք համարում մի քանի լրացումներ և ճշտումներ կատարել Նոր-Նախիջևանի հայկական գաղութի պատմության վերաբերյալ։

Նախիջևանը և նրա շրջակա հայ գյուղերը հիմնել են 1880 թ. գարնանը՝ Ղրիմից 1778 թ. բռնի տեղահան արված հայ գաղթականները։ Այդ գաղութը հիմնվեց Հավսարկի» (որ նշանակում է հավասար մարդկանց միություն, սկզբունքով։

Սակայն «Հավասարկի» մեջ փաստորեն հենց սկզբի օրերից էլ հավասարություն չի եղել, որովհետև գաղթականներից ոմանք տեղ էին հասել իրենց նավերով, կապիտալով, ապրանքով, իսկ մեծ մասը թափառելով տեղից-տեղ զրկվել էին ամեն ինչից, ապրուստի տարրական միջոցներից, այնպես որ նախիջևանցիների բաղձալի «Հավսարկը» իր գոյության առաջին իսկ օրերից ենթարկվեց դասակարգային հակամարտության օրենքներին։

Դոնի գետաբերանը որպես գաղթավայր ղրիմեցիները պատահարար չէին ընտրել. նրանք դեռևս ճենովացիների ժամանակներից քաջ ծանոթ էին Ազովի ծովին և Դոնին, նրանց ձկների հարուստ պաշարներին, շատ լավ գիտեին միջնադարյան հռչակավոր Տաննան, որ թուրքերի ձեռքին դարձավ Ազախ, իսկ ռուսների օրով՝ Ազով։ Ազովում շատ վաղուց ապրել էին բազմաթիվ հայ վաճառականներ։ 1736 թ. երբ ռուսները գրավում են Ազովը, այստեղ կային 63 ընտանիք հայ և հույն վաճառականներ[1]։ Նրանց քաջ ծանոթ էր նաև Տեմերնիկի նավահանգիստը, որտեղ 1749 թ. գոյություն ուներ մաքսատուն. այդտեղ հայտնի հայ վաճառական Խ. Խաստատովը հիմնել էր ակցիոներական խոշոր ընկերություն՝ Ռուսաստանից ապրանքներ արտահանելու համար։

Թեև թուրքերի տիրապետության օրով ճենովացիների հռչակավոր Կաֆան միջազգային առևտրի մեջ կորցրել էր իր նախկին նշանակությունը, դարձել էր Քեֆե, բայց և այնպես մեծ էր նրա դերը փոխանակային առևտրի բնագավառում և անվանվում էր Քուչուք-Ստամպոլ (Փոքրիկ Ստամբուլ)։ Քուչուք-ստամպոլցիք Ազովի վրայով առևտրական սերտ կապեր էին պահպանում թե Հյուսիսային Կովկասի և թե Ռուսաստանի հետ։

Ղրիմցիները տեղավորվելով Դոնի գետաբերանը իրենց համար առևտրի ավելի նպաստավոր պայմաններ ստեղծեցին։ Շուտով Նախիջևանը դարձավ առևտրական կարևոր կենտրոն, արդյունաբերական ապրանքների պահեստատեղի, այսպես ասած, մի մեծ շտեմարան։

---

[1] Տե՛ս Бутков, Материалы для истории Кавказа, ч. I, стр. 189.

Ղրիմից տեղահան արված շատ հայ գաղթականների համարյա կեսը ցրվեց Կովկասի և Դոնբասի նորաշեն քաղաքներն ու գյուղերը։ Նրանք իրենց ձեռքն առան տեղական առևտուրն ու արհեստը, միաժամանակ ամուր կապ պահպանելով Նախիջևանի հետ։ Նախիջևանը նման էր մի հսկա ծառի, որի սաղարթախիտ ճյուղերը փռվում էին Դոնի ձախ ափից Հյուսիսային Կովկասի, աջից՝ Հարավային Ռուսաստանի ամբողջ առևտրի վրա։

Ռուսաստանի, Եվրոպայի և Ասիայի արդյունաբերական ապրանքները տեղացի վաճառականներին մատակարարում էր Նախիջևանը, փոխարենը ստացվում էր առատ հումույթ, որ հիմնականում արտահանվում էր Եվրոպա։ Այսպես, կարճ ժամանակամիջոցում Նախիջևանի առևտրականները դիզում են մեծ հարստություն։ Ալեքսանդր I-ին կայսրը իր այցելություններից մեկի ժամանակ (նա երեք անգամ այցելել է Նախիջևան)—կատակով ասել է, թե հայ հարուստների տները իրենց ոսկեզօծ պատերով և կահույքով ավելի շքեղ են, քան իր Տագանրոգի պալատը։

Շռայլության առաջն առնելու համար կազմվում է 39 հոդվածից բաղկացած «Կանոն անքակտելի և ուխտ հավիտենական», որը, առաջնորդի կողմից հաստատվելուց հետո, 1817 թ. հանձնվում է քաղաքագլխին՝ ի գործադրություն։ Կանոնը պահանջում էր համեստություն հագուստի, ուտելիքի և առհասարակ ապրուստի մեջ։

Առևտրի այսօրինակ ծավալումը, հարստությունների կուտակումը մի խումբ մարդկանց ձեռքում՝ արագացրեց «Հավլաբրի» վախճանը։

Ժողովրդի մեջ ծայր առած դասակարգային պայքարը գնալով սաստկացավ և կատաղի բնույթ ընդունեց 1830—1870 թթ.։

Հողային հարցը և նրա շուրջը տեղի ունեցող հակամարտությունները ըստ էության, շատ ավելի մեծ կարևորություն չէին ներկայացնում, քան մի քանի հարյուր հազարի հասնող եկեղեցական դումարների հարցը։ 30—40 հազար դեսյատին բերրի հողեր խարեբայությամբ խլվեցին գյուղացիությունից և վերածվեցին երկրագործների կեղեքման աղբյուրի։ Հողի համար մղվող այս պայքարը սկսվեց 1793 թ. և շարունակվեց մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան։

Հողերը բռնագրավելու խնդրի շուրջը երկարատև պայքար է գնում Աբրահամյան պարոնների միջև։ Այդ պայքարն առանձնապես բորբոքվում է 1825—1860 թթ., երբ ամբողջ հայ գաղութի վիճակը տնօրինում էր քաղաքագլուխ Խալիբի անսանձ իշխանությունը։

Դժվար է, շատ դժվար է ենթադրել, որ այդ կռիվներին կեղեքվող գյուղացիների կողմից կարող է մասնակցած չլինել Մ. Նալբանդյանը։ Սակայն այդ մասնակցությունը հաստատող տվյալներ մինչև այժմ չկային։ Նախիջևանի ծերերը տարիներ առաջ պատմում էին, որ Միխայլը (Մ. Նալբանդյանը) շատ-շատ գնում էր գյուղերը և Պետրոս Սիմոնյանի հետ տեղեկություններ հավաքում Գ. Պատկանյանի համար։ Պատմում էին նաև որ անվանի գրող և գործիչ դառնալուց հետո Նալբանդյանը մի անգամ կանգնել է Չալթրում գետի ափին և երկար զրույց ունեցել գյուղացիների հետ հողերի և այլ հասարակական հարցերի շուրջը։ Ահա այն բոլորը, ինչ հայտնի էր այդ ուղղությամբ։ Այս բացը որոշ չափով լրացնում է Աշ. Հովհաննիսյանի բերած փաստը, ըստ որի

հողերի մասին Ներսես Աշտարակեցուն ուղղված 1849 թ. գյուղացիների խնդրագիրը գրված է Մ. Նալբանդյանի ձեռքով[1]։

Այժմ միանգամայն պարզ է, թե այդ հարցի առթիվ խալիֆի ու նրա կողմնակիցների Վորոնցովին ուղղած դիմումի մեջ ով է ակնարկվում որպես գյուղացիների անբարեհույս խորհրդատու։ Սակայն այստեղ հարկ ենք համարում նշել, որ սխալ փաստերի վրա է հիմնված հարգելի հեղինակի այն տեղեկությունը, ըստ որի «ցարական կառավարությունը քաղաքի բնակչության և շրջակա հայ գյուղացիներին հատկացրել էր 67 հազար դեսյատին հողային ֆոնդ»։ Նույն գրքի հետևյալ էջում հեղինակը մեջ է բերում սենատի վճիռը, որով 1848 թ. հուլիսի 22-ին «գյուղացիների վրա վերահաստատվում է 67 հազար, Ն. Նախիջևանի քաղաքի վրա 12 հազար և ս. Խաչ վանքի վրա 8 հազար դեսյատին հող»[2]։

Իրողությունն այս է. 1779 թ. նոյեմբերի 14-ին Կատարինե 2-րդ կայսրուհու արտոնագրի հինգերորդ հոդվածի համաձայն Նախիջևան քաղաքին հատկացվում էր 12 հազար դեսյատին հող, իսկ երկրագործությամբ զբաղվող ամեն մի գյուղացուն (տղամարդու)՝ 30 դեսյատին։ Գյուղացիներին տրվելիք հողերի ընդհանուր քանակը արտոնագրի մեջ որոշված չէր։

Ազովյան նահանգի տեղական իշխանությունը հայերին Դոն գետի աջ ափում արամադրել էր 35 հազար դեսյատին, իսկ ձախ ափում՝ մոծակներով հարուստ մի ընդարձակ ճահճոտ հողամաս, մոտավորապես 57—62 հազար դեսյատին տարածությամբ։

Գաղթականները իրենց քաղաքը և գյուղերը հիմնել էին գետի աջ կողմում և մշակում էին միմիայն այդ ափի հողերը։ Ձախ ափի հողերը, թեպետ ունեին տեղ-տեղ կանաչ մարգագետիններ, ճահճոտ լինելու պատճառով անմշակ էին։ Գետի վրա կամուրջ չկար, հայերը չէին կարող աջ ափից անցնել ձախ ափը և օգտվել այդ հողերից։

Գաղթականների խնդրանքով 1783 թ. Արզությանը դիմում է Պոտյոմկինին և, պատճառաբանելով, որ հայերը անկարող են և անսովոր Դոնի ձախ ափի ճահճուտները մշակել, խնդրում հատկացնել նրանց Սամբիկի ստեպը, որը գտնվում էր գետի աջ ափին, Տուզլովա-Սամբիկ գետերի արանքում և իր արևմտյան ծայրով հասնում էր Ազովի ծովին։

Պոտյոմկինն ընդառաջում է հայերի ցանկությանը։

Սամբիկի ստեպը ստանալուց հետո հայերին պատկանող հողերի ընդհանուր տարածությունը գետի աջ ափին 87 հազար դեսյատինից ավելի է դառնում։ Դոնի ձախ ափի հողերը տրվում է դաղախներին, բայց մի մեծ հողակտոր՝ հինգ հազար դեսյատինից ավելի մնում է դարձյալ իրենց։ Նշանակում է Դոնի աջ ու ձախ ափերի հայոց հողերի ընդհանուր տարածությունը 92 հազար դեսյատինից ավելի էր։ Քաղաքին պատկանող 12 հազար դեսյատինը չհաշված, երկրագործության համար մնում էր 80 հազար դեսյատին, գյուղացիների ամեն շնչին պատկանող 30 դեսյատին տալուց հետո մնում էր մոտ 40 հազար դեսյատին ավելորդ հող։ Քաղաքը, ս. Խաչ վանքի կարիքները բավարարելու պատրվակով, այդ հողերից կտրեց ևս 8 հազար դեսյատին, թեև ոչ վանքը և ոչ էլ վանքի ավանում ապրող գյուղացիները երբեք մաս չունեցան այդ հողից։

[1] Տե՛ս Ա. Ռ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 58։
[2] Նույն տեղում, էջ 57։

Այսպիսով մոտ 30 հազար դեսյատին հող ազատ էր մնում։ Ահա այդ հողի շուրջը քաղաքի և գյուղերի միջև ծավալվում է մի երկարատև պայքար։

Հայերի հետ միասին Ղրիմից գաղթել էին նաև հույներ։ Նրանք Ազովի ափին հիմնել էին Մարիոպոլ քաղաքը և մի շարք գյուղեր։ Նրանք ևս ունեին ավելորդ հողերի մեծ տարածություններ։ Այդ ավելորդ հողերը մնում են գյուղացիությանը՝ հետագայում նորեկներին և ծնվելիք երեխաներին հատկացնելու համար՝։

Այսպես չվարվեցին Նախիջևանում։

Արտոնագրի համաձայն բոլոր հայերը, քաղաքացիներն ու գյուղացիները, կազմում էին «մի հայ հասարակություն» և բոլոր արտոնությունները տրված էին այդ հասարակությանը, որի գլուխը կանգնած էր Մագիստրատը։

Սկզբում ավելորդ հողերը հայ Մագիստրատի ձեռքին էին և արդյունքները հատկացվում էին ամբողջ հայ «Հավսարկին»։ Բայց շուտով Սամբիկի արգասաբեր հողերը դառնում են հարստացող աղաների ոտնձգության առարկան։ Այդ հողերի առաջին հափշտակողը եղավ քաղաքի ամենահարուստ աղան, քաղաքագլուխը, ռուսական բանակի փոխգնդապետ Հովհաննես Աբրահամյանը։ Նա Ազովի ծովի մոտ, Սամբիկ գետի վրա յուրացրեց մոտ հազար դեսյատին հողամաս։ Նրա օրինակին հետևեց Կարապետ Ոսկանյանը՝ 500 դեսյատին ընտիր վարելահող կտրելով նույն Սամբիկի տափաստանից և ապա շատ ուրիշները։

Այդ ընթացքում Արղությանը բացակա էր Նախիջևանից։ Վերադառնալով քաղաք, նա բողոքում է այդ հափշտակության դեմ, որը և առիթ դարձավ նրա և Աբրահամյանի թշնամությանը։ Սակայն Արղությանի օրոք այդպիսի դեպքեր այլևս չկրկնվեցին։ Աբրահամյանը իր անօրինական գործելակերպով Խալիբյանի նախորդն էր։

1801 թ. հողաշինարարության ժամանակ Նովոռուսիայի երկրաչափական գրասենյակը հայկական գյուղերի հողերի քանակը գրանցել էր 67.076 դեսյատին։

Օրըստօրե առասպելական հարստություն դիզող առևտրականների հայացքն ուղղվում էր այդ հողերին. նրանց հող էր պետք իրենց առևտրական գործարքների համար, ուստի և անընդհատ առիթ էին որոնում խլելու այդ հողերի մեծ կամ փոքր կտորներ։

1811 թ. կաշառքներով, կերուխումով և զանազան այլ միջոցներով առևտրականներին հաջողվում է ստանալ Տագանրոգի քաղաքապետի համաձայնությունը այդ հարցում։ Վերջինիս կարգադրությամբ 1814 թ. Մագիստրատը Աբրահամյանի ազարակի կողքին 25 նոր ագարակ է հատկացնում քաղաքի աղաներին։ Այդ հողերի ընդհանուր տարածությունը պաշտոնական թղթերում հաշվված է 5100 դեսյատին, բայց փաստորեն հասնում էր մինչև 7000 դեսյատինի։ Ըստ որում գյուղացիներին համոզել էին, որ այդ հողերը որոշակի վարձով տրվում է ժամանակավոր մշակման ու ոչխարաբուծության համար։ Դրանից հետո հողերի գրավումը շարունակվում է առավել եռանդով. արդեն կալվածատերերը բացարձակ ցանկություն են հայտնում այն մասին, որ գյուղացիների հողերը վերցվեն ամբողջովին, և գյուղացիները դառնան հողերի վրա աշխատողներ, այսինքն ճորտեր։

---

[1] См. *Н. Дубровин*, Присоединение Крыма к России, т. III, стр. 370—372.

Այս միտքը սկզբում հղացել էր փոխգնդապետ Աբրահամյանը, 1820 թ. այդ մտքի իրագործումը հանգիստ չէր տալիս Խալիբին։ Այդ առթիվ նա տեսնվում է գեներալ Մադաթովի հետ, խնդրում վերջինիս աջակցությունը Պետերբուրգում։ Լուրեր են տարածվում, թե Խալիբն իբր մի հոդված է գտել հայոց դատաստանագրքում, որով թույլ էր տրվում ճորտացնել հայ գյուղացիներին, ինչպես և քաղաքի չունևորներին։

Խալիբը Սամբիկի ստեպում ձեռք էր բերել երեք ագարակ, որոնց ընդհանուր տարածությունը հասնում էր մոտ 2000 դեսյատինի։ Նրան և նրա հարևան ագարակատերերին հարկավոր էր էժան բանվորական ուժ, այս ուղղությամբ մեծ հեռանկարներ են բացվում, երբ 1836 թ. հաստատվեց գլխահարկը։ Կալվածատերերը առաջարկ են մտցնում, որպեսզի չքավորների գլխահարկը վճարեն իրենք, իսկ նրանց օգտագործեն իրենց հողերի վրա և շահագործեն։ Սակայն այդ ծրագիրը նրանց չի հաջողվում իրագործել։

Այդ ընթացքում գյուղացիների հողերի հափշտակումը շարունակվում էր, շինվում էին նոր խուտորներ, Խալիբի հոտերն ազատ արածում էին գյուղացիների հողերում։ Զուգընթացաբար աճում են նաև գյուղացիության դժգոհությունները։ Պայքարը սրվում է հատկապես անցյալ դարի 40-ական թվականներին։ Գյուղացիները սկսում են իրենց հարձակումները կալվածատերերի ագարակների վրա, հաճախ կրակի էին մատնվում նոր ագարակները, շենքերը ոչնչացվում։ Մինչև այսօր էլ վայրեր կան, որոնք կոչվում են «էրած խութուռ»։ Գյուղացիության այս պոռթկումները Խալիբը ռուսական իշխանություններին ներկայացնում է որպես ապստամբություն։ Նրա մտերիմ բարեկամը, Տագանրոգի քաղաքապետ Բառոն Օթթոֆրանկը «ապստամբներին» ճնշելու համար ուղարկում է պատժիչ ջոկատներ։

Գյուղացիների համար շատ դժվար էր պայքարել Խալիբի դեմ։ Նրանք քանիցս փորձում են պատգամավորներ ուղարկել բարձր իշխանության դուռը, բողոքել անարդարությունների դեմ, բայց ամեն ինչ խանգարվում է Խալիբի ձեռք առած միջոցառումներով, բողոքավորները խստիվ պատժվում են։

Ի վերջո գյուղացիներին հաջողվում է պատգամավորություն ուղարկել կենտրոն։

Պետերբուրգում պատգամավորները դիմում են Քրիստափոր Լազարևին, որը, ուսումնասիրելով գործը, դիմում է արդարադատության մինիստր կոմս Պանինին։ Սկսվում է գործի քննությունը, գյուղացիները խնդրում են իրենց վերադարձնել այն 67 հազար դեսյատին տարածությունը, որ նրանց վրա հաստատված է եղել 1801 թ. հողաշինարարության ժամանակ։ Խալիբի կողմից ներկա է լինում Մագիստրատի ներկայացուցիչ Մալայանը՝ իր հավատարմատարի հետ։

1848 թ. հուլիսի 22-ին Պետական խորհուրդը վճռում է հայ գյուղացիներին հատկացնել 67.076 դեսյատին հող։ Գյուղացի պատգամավորները վերադառնում են վճիռը իրենց ձեռքում, իսկ Մալայանը մնում է Պետերբուրգում գործը շարունակելու, վճիռը փոխել տալու համար։ Գյուղերում լինում է մեծ ցնծություն այդ առթիվ, երգեր են հորինվում, որոնցից մեզ հասել է միայն մի քանի տող.

Ուրախություն մեզի համար
Կարասլետն ու Եղիազար,
Իրեքումն ալ Վարդերես
Հոնալ եղան պարզերես։
Մալան ամոթին հոն մնաց
Սաղ ձմեռը հոս հոն դնաց
Մալան եկավ ամառը,
Կերավ Խալիբին շամառը։

Բայց և գյուղացիները հասկանում են, որ Սալայանը մնացել է Պետերբուրգում վճիռը բեկանելու նպատակով։ Եվ Խալիբի հետագա խարդախություններից խուսափելու համար որոշում են դիմել Ներսեսին։ Այդ որոշման հետևանքն է, անշուշտ, Նալբանդյանի ձեռքով գրված աղերսագիրը Ներսեսին։ Մասնավոր նամակով այդ առթիվ Ներսեսին է դիմում նաև Լազարևը։

Գործում են նաև Խալիբն ու նրա արբանյակները, որոնք մեծ գանգատով դիմում են Վորոնցովին։ Մեր կարծիքով այդ այն դանդատն է, որ գտնվել է հանգուցյալ Ավագ Դիրիճանյանի թղթերում, իսկ այժմ գտնվում է Մարտիրոս Աթոյանի մոտ և որի վրա էլ հենվում է Ա. Հովհաննիսյանը[1]։ Չնայած այս ամենին, պետական խորհրդով հաստատված սենատի վճիռը հօգուտ գյուղացիների՝ մնում է անկատար։

Խալիբի ոստայնում գտնվող տեղական իշխանությունները չեն համարձակվում ի կատար ածել սենատի վճիռը, գյուղացիները մնում են իրենց 46.444 դեսյատին հողով։

Այսպես մեծ և անհաղթահարելի էր Խալիբի ուժը։

Խալիբը Նախիջևանի քաղաքագլուխ է ընտրվել չորս անգամ ընդմիջումներով և երբեք ոչ ոքի ոչ մի հաշիվ չի տվել։ Համարձակ կերպով կարելի է ասել, որ 35 տարի շարունակ քաղաքի տերն ու տնօրենը եղել է նա—որովհետև ընդմիջումներին նրան հաջորդած քաղաքագլուխները ամենքն էլ նրա արբանյակներն էին։ Այդ շրջանում Խալիբի ցուցումներով քաղաքագլուխ են եղել նրա աները՝ Գևորգ Օդաբաշյանը, նրա խնամին՝ Գաբրիել Խոջայանը, նրա մոտ ընկերը՝ Խաչատուր Խոմաճյանը և ուրիշներ։ Իր բազմատեսակ և բազմաճյուղ առևտրական գործերով ավելի ազատ զբաղվելու համար Խալիբը մեջընդմեջ նրանց էր քաղաքագլուխ դարձնում, իսկ փաստորեն կառավարում էր ինքը. նրա խոսքը օրենք էր բոլորի համար։

Եվ այդ 35 տարվա ընթացքում քաղաքում չի կատարվել ոչ մի բարեկարգություն, չի հիմնվել ոչ մի դպրոց, ոչ մի հիվանդանոց, որբանոց կամ անկելանոց, ոչ մի փողոց չի սալահատակվել և առհասարակ քաղաքի բարօրության մասին ոչ մի հոգացողություն հանդես չի բերվել։ Նրա միակ զբաղմունքը եղել է քաղաքը կողոպտելը։ Նրա մասին շառխրճիները երգել են.

Մուխը մարեց գեղ ու քաղաքին,
Արունը ծծեց ղարիբ—Ղազարին։

Ահա թե ինչ է գրում Խալիբի մասին նրա ժամանակակից Գ. Պատկանյանը. «...գործք քաղաքագլխության կային ի կամս Աստուծո ապաստան, դրա-

[1] Տե՛ս Ա. Դ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 2, էջ 161։

մազլուխք սրբոց և այրաց իսպառ անհետ եղյալ, ի բանդեն ստեպ արգելականք կրխուսափեին, քաղաքեն մարդիկ աներևույթ կլլնեին շուկայք անմաքուր և աղտեղի դեշք սատակեալ շանց, կատուաց և այլն ամսօրյա ժամանակոք կրմնային ի փողոցամեջս, գողություն կը հաճախեին, առևանգություն եղեն սովորական ինչ...[1]

Ակամա հարց է ծագում, գուցե Գ. Պատկանյանը, որպես նրա հակառակորդ, գույները խտացրել է. բայց մենք լսել ենք Խալիբի ազգական Հովհ. Պապասինյանից և շատ շատերից ավելի վատ պատմություններ։

Ժողովրդական բանահյուսությունը Խալիբին այսպես է բնութագրել՝

Մեծ ղալբմ մաշդ էր պապուկ աղա,
Մեր քաղաքի ղուլում գոլովան.
Ավելի զոռբա էր առջևի տղան—
Աթլը խառաուլ գեղացի Ստյոփան,
«...Աղան կելներ ժեք ձին լրծած,
Ստյոփան առջևին չալ ձին հեծած.
Խալմուխամչին ժրվիլ-դրվիլ,
Հալխը առջևը տիրիլ-տիրիլ...

Այսպիսին է եղել Հարություն Խալիբյանը կամ, ինչպես մեծ արհամարհանքով անվանում էր ժողովուրդը Խալիբսրզ Պապուկը։

* * *

Խալիբի «խոշոր բարեգործություններից» հայտնի են երկուսը՝ Խալիբյան ուսումնարանի և տպարանի բացումը։ Ֆեոդոսիայում և «Հավի ցամաքալեզվակ» կոչված հողամասի նվիրումը ռուս փախստական մուժիկներին և իր ապատած ճորտերին։

Ճիշտ չէ, Աշոտ Հովհաննիսյանը երբ գրում է, թե Խալիբը «Ֆեոդոսիայում հիմնեց հայ եկեղեցին, դպրոցն ու տպարանը»։

Խալիբը եկեղեցի չի շինել. Ֆեոդոսիայի ոչ այնքան էլ մեծ թիվ կազմող հայությունը ուներ չորս լուսավորչական և մի կաթոլիկ եկեղեցի, այնպես որ եկեղեցու կարիք չկար։ Խալիբը կառուցեց դպրոցի գեղեցիկ շենք և նրա ներքին հարկում բացեց տպարան։

Խալիբի տվյալներով այդ ամենի համար նա ծախսել էր 153 հազար ռուբլի, դրա համար էլ դպրոցը կրում էր նրա անունը։ Եվ այս կարելի էր համարել օրինական, եթե Խալիբը այդ ամենը շինած լիներ իսկապես իր միջոցներով։ Սակայն բանն այն է, որ Նոր-Նախիջևանի եկեղեցական գումարները գտնվում էին նրա ձեռքին, որոնք երկար տարիների ընթացքում նա չէր վերադարձնում ժողովրդին։ Այդ վողերի ընդհանուր գումարը համենայն դեպս 200 հազար ռուբլուց պակաս չէր։

Երկար դատավարությունից և մեծամեծ աղմուկներից հետո Խալիբը, Այվազովսկուն իր կողմը թերելու նպատակով, եկեղեցական պարտքերի փոխա-

[1] Գ. Պատկանյան. Նոր-Նախիջևանի պատմությունը, Ն. Նախիջևան, 1917, էջ 108։

լեն տվեց 62 հազար ռուբլու մուրհակ, որով և Այվազովսկին նրան համարեց պարտքից ազատված։ Բացի դրանից Խալիբը Այվազովսկու տրամադրության տակ դրեց 50 հազար ռուբլի դպրոց բանալու համար։ Ահա այդ փողերը ծախսելով և դրա վրա էլ իր կողմից՝ որոշ գումար ավելացնելով Խալիբը շինեց Ֆեոդոսիայի դպրոցի շենքը։ Եթե անվիճելի համարենք դպրոցի շենքի կառուցման համար ծախսած Խալիբի 153 հազար ռուբլու հաշիվը, նա դարձյալ ժողովրդին պարտք է մնում առնվազն 47.000 ռուբլի։ Փաստորեն դպրոցը կառուցվել է եկեղեցական փողերով, որից հետո Խալիբը հայտարարվել է «ազգային բարերար»։

Խալիբյան ուսումնարանը փակվելուց հետո նա խոստանում է իր բարեկամ Այվազովսկուն ապահովել ուսումնարանի գոյությունը, կտակելով յուր 6500 դեսյատին ընդարձակ կալվածքը Սիղաշի աղահանքերով և Տագանրոգի սնփական տներով։ Բայց այդ ամենը լոկ խոսքեր էին։ Խալիբը մեռնելուց մի քանի օր առաջ հրավիրում է Այվազովսկուն, բայց հիվանդության թե ժլատության պատճառով ոչինչ չի կտակում։

Խալիբի երկրորդ «բարեգործությունը» այն է, որ նա փախստական ռուս գյուղացիներին նվիրում է «Հավի ցամաքալեզվակ» կոչված հողամասը, 1200 դեսյատին տարածությամբ, որը պատկանում էր հայ գյուղացիներին։

Ինչպես վերն ասվեց, 1779 թ. Դոնի աջ ափի հողերը հայերին չէին բավարարում, ուստի Արղությանի միջնորդությամբ 1793 թ., որպես լրացուցիչ բաժին, հայերը ստանում են Սամբիկի ստեպը, որ արևմուտքից հասնում էր Ազովյան ծովին և մի գեղեցիկ հրվանդանով ցցվում ծովի մեջ։ Դա մի չքնաղ վայր է. հարուստ բարձրորակ ձկներով, շատ հարմար ձկնորսության համար, հողը շատ բերրի է, այգեգործության, պարտիզպանության, բանջարաբուծության և առհասարակ գյուղատնտեսության համար ուղղակի անգնահատելի։

Այդ հողերի վրա հայերը բնակություն չէին հաստատել, որովհետև դրանք ստացել էին հետագայում, երբ արդեն հիմնել էին իրենց գյուղերն ու քաղաքը։ Այդ վայրը Տագանրոգից գտնվում է 10—12, Նախիջևանից 55, իսկ գյուղերից 35—40 վերստի վրա։

Այդ վայրին կից էին Խալիբի երեք ագարակներն ու մյուս աղաների կալվածքները։ Հայերը ձկնորսությամբ չէին զբաղվում, դրա համար այդտեղ ոչ մի հայ չէր ապրում, իսկ հարուստները՝ խլելով գյուղացիների հողերը, շարվեցին Սամբիկի հովտում, բայց ոչ ոք ծովափ չգնաց։ Այդ պարապ տարածության վրա կամաց-կամաց սկսեցին բնակություն հաստատել եկվոր ռուս ձկնորսներ, որոնք ծովից խոշոր եկամուտ ունենալով՝ արագորեն հարստացան։ Հետո սկսեցին այդտեղ հավաքվել Ռուսաստանից փախած բանտարկյալներ, հանցագործներ, փախած ճորտեր, գյուղացիներ։ Կարճ ժամանակամիջոցում նրանք սկսեցին տներ շինել, պարտեղներ տնկել և ցանք անել։ Պարարտ հողը առատ բերք էր տալիս և այդ նոր բնակիչները անդադար լայնացնում էին հողերի գրավումը։

Այդ բոլորը կատարվում էր Խալիբի քթի տակ, որն այդ չտեսնելու էր տալիս, որովհետև շահագրգռված էր դրանում։ Հենց ինքն էր թույլ տվել նրանց բնակվել այդտեղ, որպեսզի ձրի կամ էժան վարձով կարողանա աշխատեցնել իր ագարակներում, իսկ ձկնորսների պատրաստած խավյարն ու չիլիմը գնում էր էժան գնով և ուղարկում արտասահման։

1861 թ. ռեֆորմի ժամանակ իրենց ագարակներից Ճորտերին հողաբաժին չտալու նպատակով Խալիբը և Աբրահամյանը այստեղ բնակեցնում են իրենց Ճորտերին, որոնք շարունակում են աշխատել նրանց կալվածքներում։

Այսպիսով՝ այս տարածության վրա ստեղծվում է մի գյուղ, որը գնալով ընդարձակվում է, ընդգրկելով ամբողջ թերակղզին և հայերին պատկանող ծովափնյա ամբողջ հողերը, որոնց ընդհանուր տարածությունը հաշվվում էր 1200 դեսյատին։

Այդ ամբողջ ընթացքում հայ գյուղացիները Խալիբին հիշեցնում և պահանջում են իրենց պատկանող այդ հողերը. իսկ Խալիբը միշտ հանգստացնում էր, պատասխանելով՝ թե նրանք ժամանակավոր բնակվող ձկնորսներ են և շուտով կհեռանան։

Հայ գյուղացիները նրա համար լոկ «մոգոցներ եղոտ գլուխներ» էին, և ուրիշ ոչինչ։ Հայ և ռուս գյուղացիներին զրգռելով իրար դեմ, նա չեզոքացնում էր հայ գյուղացիների ակտիվ պայքարը հայ հափշտակիչ կալվածատերերի դեմ։ Խալիբի դավերով հայ գյուղացիների և գյուղի բնակիչների միջև այս հողի համար քանիցս տեղի են ունեցել արյունահեղ ընդհարումներ։

Ղրիմի պատերազմի ժամանակ տեղի են ունենում գյուղացիական մեծ հուզումներ. դրանից մեծապես տուժում են Սամբիկի և Տուզլովի հյուսիսային կողմի ռուս կալվածատերերը, բայց այդ գետերի հարավային կողմում նստած հայ կալվածատերերը մնում են անվնաս։

Խալիբի մահվանից հետո հայ գյուղացիները դիմում են դատարան, փորձում օրենքի ուժով պաշտպանել իրենց իրավունքները, հետ վերադարձնել իրենց հողը։ Գործը տևում է երկար տարիներ և ավարտվում ութսունական թվականների կեսերին սենատի որոշումով. վաղեմիության իրավունքի համաձայն հողը հատկացվում է այդ հողից օգտվող ռուս ազգաբնակչությանը. ըստ որում այդ գործը ձրիաբար և իր ծախսով վարում էր հայ գյուղացիների հողերի առաջին հափշտակիչ Հովհաննես Աբրահամյանի որդին՝ կալվածատեր և դրնդապետ Աբրահամյանը, որ նախապես պայման էր դրել գործը շահելու դեպքում 5 տարվա իրավունքով ձրիաբար օգտագործել հողերը։

Այս գործի մանրամասնությունները պատմել է գյուղի բնակիչ 90-ամյա ծերունի Զսխար Սավագիոովը 1906 թ.։ Սավագիոովը եղել է այդ գյուղի առաջին հիմնադիրներից մեկը, նա եկել էր Ռուսաստանից և այստեղ զբաղվել ձկնորսությամբ։ Կարճ ժամանակում նա հարստացել է, բացել ձկի և խավյարի գործարան, մեծ խանութ, հողմաղաց, տնկել մեծ պարտեզ և շինել երկու խոշոր տուն իր բոլոր հարմարություններով։ 1906 թ. այդ շենքերը գոյություն ունեին, բայց գործում էր միայն հողմաղացը։ Սավագիոովը այլ ձկնորսների հետ գնում և մշակում էր մեծ քանակությամբ ձուկ։ Պատրաստի ամբողջ ձկնեղենը ձեռնտու պայմաններով գնում էր Խալիբը և Տագանրոգից արտահանում Պոլիս ու այլ վայրեր։ Ձկնորսները Խալիբից ստանում էին վարկ՝ փողով և գործիքներով, կանխավճարներ և նրա կենդանության ժամանակ երբեք իրենց տպրանքը ուրիշի չէին վաճառում։

Սավագիոովը եղել է իրենց գյուղի լիազորը։ Գործը վարելու համար նա Ա. Աբրահամյանին հավատարմագրություն տվել։ Նրա մոտ էր ամբողջ դատական գործի պատճենը։ Այդ գործից պարզվեց, որ հայերի ներկայացուցիչ եղել է Ռուփցի գյուղի հայերենի գրագիր Գաբրիել Զուբարյանը. հետագայում վերջինս լիովին հաստատեց Սավագիոովի պատմածը։ Զուբարյանի ցուցումով

Չալթր դյուղի արխիվում նույնպես գտնվեց այդ գործի պատճենը, որի մի օրինակը պահպանվում էր Սավագիոովի մոտ։ Պարզվեց, որ Չուբարյանը մեկնել էր Պետերբուրգ, ներկա էր եղել սենատի նիստին, բայց ռուսերեն լավ չիմանալով, ոչինչ չէր կարողացել անել։

Խալիբի համար հասարակական գործունեությունը մշտապես միջոց է եղել ըաքցնելու և հեշտացնելու իր հափշտակողական ձգտումները։ Սուտը, կեղծիքը, զրպարտությունը, մատնությունը, դավադրությունը, դավաճանությունը միշտ էլ եղել են Խալիբի գործունեության կարևոր գործոնները։

Այսպիսին էր Նալբանդյանի հակառակորդը, թշնամին։ Նրա բոլոր ստորությունների դեմ Նալբանդյանը մաքառել է ճշմարտության զենքով, արդար գրչով և ինչպես Նալբանդյանն է գրում՝ «ճշմարտությունը կես կոպեկի գրչով և կես կոպեկի թանաքով կթողու ապագայի դատապարտության և արհամարհանքին նորա եղկելի և թշվառ հիշատակը»։